# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՊԵՐՃ ԹՈՎՄԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆԻ Ա/Ձ-ն ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/06 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | ՊԵՐՃ ԹՈՎՄԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆԻ Ա/Ձ | ՊԵՐՃ ԹՈՎՄԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆԻ Ա/Ձ | ՊԵՐՃ ԹՈՎՄԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆԻ Ա/Ձ | ՊԵՐՃ ԹՈՎՄԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆԻ Ա/Ձ | Հաց, տեսակը` «Մատնաքաշ»: Ցորենի բարձր տեսակի և ցորենի 1-ին տեսակի ալյուրի խառնուրդից պատրաստված, առանց ավելացված կենդանական կամ բուսական յուղի, ՀՍՏ 31-99 կամ համարժեք: Փաթեթավորումը` հացի երկարությունից կամ լայնությունից ավելի մեծ թղթե կամ սննդի համար նախատեսված պոլիէթիլենային տոպրակով: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը` ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011),Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի։ Մակնշումը՝ ընթեռնելի։ Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %։ Մատակարարումն իրականացվում է ամեն աշխատանքային օր ժամը 08:00-08:50 ընկած |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ժամանակահատվածում՝ Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 1 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսակապով: Հացը մատակարարելիս տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանության շտկման ժամկետ է սահմանվում 50 րոպե: Ընդունել ի գիտություն, մատակարարումը պետք է իրականացվի տվյալ սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով, որոնք, համաձայն ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված ժամանակացույցի, պետք է ունենան սանիտարական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | անձնագրեր: Մատակարարումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին` համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով: Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: Տեղեկացվում է, որ տվյալ սննդամթերքի կասկածելի որակի կամ տեսքի դեպքում այն կներկայացվի փորձաքննության` ապրանքի որակի համապատասխանությունը բնութագրում ներկայացված պահանջները հաստատելու նպատակով: Տեղեկացվում է նաև, որ սնունդը մատակարարելիս անհրաժեշտ է, որ համապատասխան անձը ներկայանա անձը հաստատող փաստաթղթով և մատակարարող կազմակերպության կողմից տրված |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | լիազորագրով: Համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 05-ի «Աբովյան համայնքի ենթակայության մանկապարտեզների կողմից սննդամթերքի ձեռքբերման գործընթացը ուսումնասիրելու նպատակով մշտական հանձնաժողով ստեղծելու մասին» N 172 կարգադրության համաձայն հանձնաժողովը պարբերաբար հետևելու է մատակարարների հետ կնքված պայմանագրով ստանձնած պարտականությունների պատշաճ կատարմանը: Հանձնաժողովը անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կազմվում է արձանագրություն, որը պարտավորվում է ստորագրել սնունդը մատակարարող կազմակերպության լիազորած ներկայացուցիչը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ПЕРЧ ТОВМАСЯН ВАРДАНИ ИП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/06 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |
| | | | | | |